

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ

ԷԼԻՆԱ ՇԱՄԽԱԼՈՎԱ

Հոդվածը ստացվել է՝ 20.09.24, ուղարկվել է գրախոսման՝ 27.11.24, երաշխավորվել է տպագրության՝ 13.12.24

Ներածություն: Դրամավարկային քաղաքականությունը հստակ ֆիքսված տնտեսական նպատակին հասնելուն ուղղված գործընթաց է դրամավարկային քաղաքականության գործիքների կամ գործիքային փոփոխականների ընտրության ճանապարհով: Այդ գործընթացն իրականացվում է հատուկ կանոնների օգնությամբ, որոնք, կախված քաղաքական նպատակներից բազմաթիվ են, և չկա ոչ մի կոնկրետ կանոն, որի օգնությամբ հնարավոր լինի ամբողջությամբ բացատրել դրամավարկային քաղաքականության ազդեցությունը: Այս հանգամանքը կարևորվում է բաց տնտեսություն ունեցող երկրների համար, որտեղ արտաքին կամ ներքին նույնիսկ մի փոքր ցնցումը կարող է հանգեցնել դրամավարկային քաղաքականության իրականացման կանոնների փոփոխության՝ դրամավարկային նպատակային ուղենիշին հասնելու ճանապարհին:

Անհրաժեշտ է նշել, որ դրամավարկային քաղաքականության իրականացման միջոցով տնտեսությունը դուրս է բերվում ճգնաժամային իրավիճակներից, սակայն քաղաքականության սխալ վարման արդյունքում կարող է տեղի ունենալ հակառակ գործընթացը: Կենտրոնական բանկերի կողմից իրականացվող դրամավարկային քաղաքականությունը նպատակ ունի ազդել տնտեսական գործունեության վրա տոկոսադրույքների, փողի զանգվածի և այլ ֆինանսական գործիքների կառավարման միջոցով:

Դրամավարկային քաղաքականությունը շարունակում է մնալ ժամանակակից աշխարհում տնտեսական կայունության ապահովման կարևոր գործիք, որը պահանջում է հարմարվողականություն և նորարարություն՝ նոր մարտահրավերներին և տնտեսական միջավայրի փոփոխություններին արդյունավետ արձագանքելու համար: Այս ամենն էլ **արդիական են դարձնում հետազոտության թեման:**

Հոդվածի **նպատակն** է ուսումնասիրել դրամավարկային քաղաքականության ազդեցությունը երկրի տնտեսական կայունության վրա: Նպատակն իրականացնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել և վերլուծել դրամավարկային քաղաքականության գործիքները և իրականացման եղանակները,
- վերլուծել ՀՀ ԿԲ-ի կողմից իրականացվող դրամավարկային քաղաքականությունը,
- բացահայտել դրամավարկային քաղաքականության միջազգային լավագույն փորձը:

Գրականության ակնարկ. Դրամավարկային քաղաքականության տնտեսական ազդեցությունը ներկայացվել և վերլուծվել է տարբեր

տնտեսագետների կողմից: Բլանչարդը դրամավարկային քաղաքականությունը ներկայացնում է որպես կարևոր գործիք երկրի տնտեսության կառավարման և զարգացման համար: Նա նշում է, որ դրամավարկային քաղաքականության հիմնական նպատակներից մեկը գնաճի վերահսկումն է, բայց այն նաև կարող է օգտագործվել գործազրկության մակարդակի նվազեցման համար: Հեղինակը կարևորում է կենտրոնական բանկերի ինքնուրույնությունը, նշելով, որ անկախ կենտրոնական բանկը կարող է ավելի արդյունավետ վերահսկել գնաճը: Բլանչարդը բացատրում է, որ դրամավարկային քաղաքականությունը պետք է համապատասխանեցվի երկրի տնտեսական պայմաններին, իսկ դրա հիմնական գործիքներից մեկը կարող է լինել տնտեսության ակտիվության մակարդակին համապատասխան տոկոսադրույքների փոփոխությունը¹:

Ֆինանսական համակարգի և դրամավարկային քաղաքականության ուսումնասիրության հիմնական աղբյուրներից մեկը Միշկինի աշխատությունն է, որտեղ նա դիտարկում է, որ դրամավարկային քաղաքականությունը կարևոր դեր է խաղում տնտեսական կայունության ապահովման գործում: Հեղինակը նշում է, որ դրամավարկային քաղաքականությունը պետք է օգտագործվի ոչ միայն գնաճի վերահսկման, այլ նաև ֆինանսական կայունության պահպանման համար: Միշկինը համոզված է, որ կենտրոնական բանկերը պետք է չափավորեն նաև ֆինանսական ռիսկերն ու բալանսավորեն ֆինանսական շուկաների կայունությունը²: Ըստ Բեն Բեռնանսկեի, դրամավարկային քաղաքականության հաջողությունը կախված է ոչ միայն ավանդական գործիքներից, ինչպիսիք են տոկոսադրույքները և փողի զանգվածի վերահսկումը, այլև նորարարական մոտեցումներից, ինչպիսիք են ակտիվների գնման ծրագրերը և թիրախային միջոցառումները, որոնք աջակցում են տնտեսական կայունությանը ճգնաժամային իրավիճակներում³:

Ներկայումս հետազոտողներն ուշադրություն են դարձնում նաև կենտրոնական բանկերի գործառնությունների ընդլայնմանը: Մասնավորապես, ըստ Ադամ Թուրի, կենտրոնական բանկերն իրենց քաղաքականություններում պետք է ինտեգրեն կայունության և էկոլոգիական խնդիրները, քանի որ գլոբալ տաքացման հետևանքները արդեն զգալի ազդեցություն են ունենում տնտեսական աճի և ֆինանսական կայունության վրա⁴:

Եվրոպական Կենտրոնական Բանկի զեկույցներում, որոնք ներկայացված են Քրիստինա Լազարդի կողմից, թվային արժույթների աճը դիտարկվում է որպես նոր մարտահրավեր դրամավարկային քաղաքականության համար:

¹ Olivier, B., “Macroeconomics”, The 8th edition, London, UK: Pearson, 2021, 480-503 pp., 577p.

² Mishkin, F., “The Economics of Money, Banking and Financial Markets”, The 12th edition, Columbia

University, 2019. 409-474, 569-662pp.

³ Bernanke, B., “The New Tools of Monetary Policy”, Washington DC, 2020, 2-4pp.

⁴ Tooze, A., “Shutdown: How Covid Shook the World's Economy”, NY; Viking, 2021, 22-24 pp.

Ձեկույցներում ընդգծվում է, որ կենտրոնական բանկերը պետք է զարգացնեն իրենց սեփական թվային արժույթները՝ ավանդական փողից կախվածությունը նվազեցնելու համար և պահպանել դրամավարկային քաղաքականության նկատմամբ վերահսկողությունը⁵: Այս ուղղությամբ հետազոտությունների վերջին ուղղություններից մեկը նաև ընդգրկում է մեքենայական ուսուցման և Big Data-ի կիրառումը դրամավարկային քաղաքականության մոդելավորման և կանխատեսման համար⁶: Ջոնաթան Ուիլյամսի և Պյոտր Լազաքի հետազոտությունները ցույց են տալիս, որ այս գործիքները կարող են զգալիորեն բարելավել կանխատեսումների ճշգրտությունը, ապահովելով ավելի օպերատիվ արձագանք տնտեսական շուկայական փոփոխություններին⁷:

Աղբյուրների համադրությունը հնարավորություն է տալիս ավելի լավ հասկանալ դրամավարկային քաղաքականության տեսական հիմքերը և դրանց կիրառական կողմերը: Ժամանակակից գրականությունն ընդգծում է դրամավարկային քաղաքականության նորարարական գործիքների կարևորությունը, թվային տեխնոլոգիաների ներդրման անհրաժեշտությունը և գլոբալ տնտեսական համակարգի ազդեցության ազդեցությունը: Այս մոտեցումները հնարավորություն են տալիս կենտրոնական բանկերին լինել ավելի հարմարվողական՝ արձագանքելով նոր մարտահրավերներին և աջակցելով երկարաժամկետ տնտեսական կայունությանը:

Մեթոդաբանություն: Հոդվածի համար տեսական և մեթոդական հիմք են հանդիսացել արտասահմանյան և հայ գիտնականների, հետազոտողների աշխատությունները, Համաշխարհային բանկի, Արժույթի միջազգային հիմնադրամի, տարբեր երկրների կենտրոնական բանկերի կողմից հրապարակված զեկույցներն ու պաշտոնական վիճակագրությունը և այլ զեկույցներ: Հոդվածում կիրառվել է տվյալների հավաքագրման, համեմատական և վերլուծական մեթոդները:

Վերլուծություն: Դրամավարկային քաղաքականությունը իրենից ներկայացնում է տնտեսական կարգավորման պետական քաղաքականության ուղղություններից մեկը: Պրակտիկայում առանձնացվում են դրամավարկային քաղաքականության առաջնային նպատակների մի քանի տեսակներ՝ Գների կայունության, մակրոտնտեսական գերակայությունների համակցություն, կայուն փոխարժեք, ֆինանսական կայունություն Դրամավարկային քաղաքականությունն առանցքային դեր է խաղում տնտեսական կայունության ձևավորման գործում՝ ազդելով տարբեր մակրոտնտեսական փոփոխականների վրա, ինչպի-

⁵ European Central Bank, “29 June, 2021”. [Financing a green and digital recovery](#), Date of access December 9, 2024.

⁶ Lasak, P., Williams, J., “Digital Transformation and The Economics of Banking”, NY 1st edition, 2024, 32-33pp.,

⁷ Lasak, P., Williams, J., “Digital Transformation and The Economics of Banking”, NY 1st edition, 2024, 212-215pp.

սիք են գնաճը, արտադրանքի ծավալը, զբաղվածության մակարդակը և ֆինանսական շուկայի պայմանները⁸:

Իրականացվող դրամավարկային քաղաքականության ընթացքում փողի առաջարկի փոփոխության ազդեցությունը տնտեսության վրա, որն անվանում են փողի փոխանցումային մեխանիզմ (ՓՓՄ) (transmission mechanism of monetary policy), ցույց է տալիս, թե ինչպես է դրանով պայմանավորված՝ փոխվում իրավիճակն իրական շուկայում: Այն իրենից ներկայացնում է փոփոխականների համակարգ, որոնց միջոցով փողի առաջարկն ազդում է տնտեսական ակտիվության վրա: Փոխանցումային մեխանիզմի կառուցվածքը կազմված է այսպես կոչված խողովակներից, որոնք ներկայացնում են մակրոտնտեսական փոփոխականների յուրահատուկ շղթա, որոնցով փոխանցվում են փոփոխությունների ազդակները: Փողի փոխանցումային մեխանիզմի ուղիներն են՝ տոկոսադրույքի, վարկային, փոխարժեքի, ակտիվների արժեքի, բարեկեցության և մոնետար⁹: ՀՀ Կենտրոնական բանկը կարճատև ժամանակահատվածում ձեռք է բերել դրամավարկային քաղաքականության մշակման և իրականացման մեծ փորձ՝ անցումային տարիներին դիմակայելով նույնքան մարտահրավերների, որքան կայուն տնտեսությունները՝ տասնամյակների ընթացքում: 2003 թվականին ՀՀ ԿԲ-ն առաջին անգամ հրապարակեց Զարգացման տեսլականը¹⁰, որում արտացոլված էր տնտեսագետների համակարծրությունը, որ գոյություն չունի գնաճ-տնտեսական աճ երկրնստանք երկարատև ժամանակահատվածում, որ սպասումները վճռորոշ դեր են խաղում դրամավարկային քաղաքականության արդյունավետության առումով: Ելնելով այս հիմնադրույթներից՝ փաստաթղթում կարևորվում էր Կենտրոնական բանկի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման անհրաժեշտությունը՝ տնտեսության արագորեն փոփոխվող պայմաններում գնաճի արդյունավետ կառավարման և դրամավարկային քաղաքականությունն առավել բաց, թափանցիկ և հասարակությանն առավել ընկալելի դարձնելու նպատակով: Ըստ էության, զարգացման տեսլականի հիմքում գնաճի նպատակադրման ռազմավարության ընդունման գաղափարն էր, ինչն էլ անհրաժեշտ էր առավել մանրամասն հիմնավորել¹¹: 2006 թ.-ի հունվարից ՀՀ ԿԲ-ն անցում է կատարել գնաճի նպատակադրման ռազմավարության: Վերջինիս ներքո, որպես անվանական խարիսխ և միջանկյալ նպատակ սահմանվել է գնաճի կանխատեսված մակարդակը, իսկ որպես գործառնական նպատակ՝

⁸ Моисеев, С., Денежно кредитная политика: теория и практика, М. 2011, с.193

⁹ Андрюшин, С., Кузнецова, В., Приоритеты денежно-кредитной политики центральных банков в новых условиях, Вопросы экономики, 2011, N 6. с. 9

¹⁰ ՀՀ ԿԲ (2011) ՀՀ ԿԲ տեսլականը 2009-2011թթ., հասանելի է՝ <https://www.cba.am/AM/panalyticalmaterialsresearches/CBA%20vision%202009-2011.pdf>,

¹¹ ՀՀ ԿԲ (2021). ՀՀ ԿԲ ռազմավարություն հաստատված խորհրդի 2021 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 180Ս որոշմամբ, հասանելի է՝ <https://www.cba.am/AM/panalyticalmaterialsresearches/Strategy%202021.pdf>.

կարճաժամկետ տոկոսադրույքը: Գնաճի ռազմավարության ներքո ՀՀ ԿԲ-ն կանխատեսում է գնաճի ցուցանիշը, այնուհետև, իր գործողություններն, այն է դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքների կիրառումը, ուղղում է նպատակային ցուցանիշից շեղման վերացմանը: Որպես գործառնական նպատակ տոկոսադրույքի հանդես գալու պարագայում ՀՀ ԿԲ-ն ներկայումս առավել կարևորում է դրա դերի բարձրացումը, ինչը արտահայտվում է ներկայացվող դրամավարկային քաղաքականության գործիքակազմում:

Գների կայունության խնդրի իրագործման նպատակով կենտրոնական բանկը մշակում, հաստատում և իրականացնում է դրամավարկային քաղաքականության ծրագրեր¹²: Ծրագրով մակրոտնտեսական փաստացի և սպասվող զարգացումների վերլուծության հիման վրա նախանշվում են դրամավարկային քաղաքականության հիմնական ուղղությունները:

Իր հիմնական խնդիրն իրականացնելու նպատակով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկի մասին Հայաստանի Հանրապետության օրենքով ամրագրված Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի կայունության, իրացվելիության, վճարունակության և բնականոն գործունեության համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու խնդրի իրագործման շրջանակներում, կենտրոնական բանկը հանրապետության ֆինանսական շուկայում հանդես է գալիս նաև որպես վերջին ատյանի վարկատու և հնարավորություն է տալիս առևտրային բանկերին մշտապես ներդնել ավելցուկային միջոցները՝ շուկայականից համապատասխանաբար ավելի բարձր և ավելի ցածր տոկոսադրույքներով:

Միաժամանակ, կարևորելով հանրապետության ֆինանսական շուկայում ազատ մրցակցային հարաբերությունների պահպանումն ու զարգացումը՝ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկը իր գործառնություններն իրականացնում է՝ կիրառելով շուկայական մեխանիզմներ:

Այս գործառնությունների ընթացքում ԿԲ-ն հանդես է գալիս որպես ֆինանսական շուկայի մասնակիցներից մեկը և իր գործողություններով չի խոչընդոտում ազատ մրցակցային հարաբերությունների ձևավորմանը: Բացառություն կարող են կազմել այն դեպքերը, երբ առկա են մակրոտնտեսական հաշվեկշռվածությունից լուրջ շեղումներ (օրինակ՝ բանկային համակարգի ճգնաժամ), ինչի մասին ՀՀ ԿԲ-ն նախապես հայտարարում է: Այդ պարագայում ԿԲ-ն կարող է տրամադրել համակարգային վարկեր: ՀՀ Կենտրոնական բանկը ներքին ֆինանսական շուկայում հանդես է գալիս ելնելով միայն դրամավարկային քաղաքականության հիմնական նպատակներից: Այն իրականացնելու համար ՀՀ ԿԲ-ը կիրառում է.

➤ Ուղղակի գործիքներ, որոնց միջոցով ՀՀ ԿԲ-ն կարողանում է ազդել բանկային համակարգի վրա շրջանցելով շուկայական մեխանիզմները, կիրառելով վարչական եղանակներ:

¹² «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդված, հասանելի է arlis.am/DocumentView.aspx?docID=64633

➤ Անուղղակի գործիքներ, որոնց միջոցով ՀՀ ԿԲ-ն հնարավորություն է ունենում ազդել բանկային համակարգի վրա շուկայական մեխանիզմների (առաջարկի և պահանջարկի) միջոցով:

Գնաձի նպատակադրման ռազմավարության իրականացման ընթացքում ՀՀ ԿԲ-ն հանրապետության ֆինանսական շուկայում հանդես է գալիս դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքներով, որոնք, ըստ կիրառման նպատակի, բաժանվում են 4 խմբի.

✓ հիմնական գործիք, որը իրականացվում է կենտրոնական բանկի նախաձեռնությամբ՝ ստանդարտ տենդերի ճանապարհով, գործիքը կիրառվում է իրացվելիության ներարկման նպատակով ,

✓ ճշգրտող գործիքներ, որոնք իրականացվում են կենտրոնական բանկի նախաձեռնությամբ՝ արագ տենդերի ճանապարհով, նպատակ ունեն հարթելու իրացվելիության և տոկոսադրույքների հնարավոր կարճաժամկետ շեղումները,

✓ բանկի նախաձեռնությամբ՝ ստանդարտ տենդերի կառուցվածքային գործիքներ, որոնք իրականացվում են կենտրոնական ճանապարհով, կիրառվելու են երկարաժամկետ ճշգրտումներ իրականացնելու նպատակով,

✓ մշտական հնարավորության գործիքներ, որոնք իրականացվում են բանկերի նախաձեռնությամբ:

Դրամավարկային քաղաքականության իրականացման գործընթացում հարկ է ուսումնասիրել արտասահմանյան երկրների փորձը, որպեսզի կարողանանք մշակել և իրականացնել ժամանակի տենդենցներին համահունչ քաղաքականություն¹³: Աշխարհի տարբեր երկրներում վարվող դրամավարկային քաղաքականությունները տարբերվում են՝ կախված տվյալ երկրների տնտեսական կառուցվածքից, կենտրոնական բանկերի գործառույթներից, ինչպես նաև ներքին և արտաքին տնտեսական պայմաններից: Ստորև ներկայացվում են մի քանի պետությունների դրամավարկային քաղաքականությունների հիմնական առանձնահատկությունները.

Եվրոգոտի. Եվրոպական կենտրոնական բանկը (ԵԿԲ) կենտրոնացած է եվրագոտում գների կայունության վրա՝ կենտրոնանալով ավելի ցածր, բայց մոտ 2% գնաձի վրա¹⁴: Այն օգտագործում է տոկոսադրույքների ճշգրտումներ և ակտիվների գնման ծրագրեր: ԵԿԲ-ն Եվրոհամակարգի շրջանակներում սերտորեն համագործակցում է Ազգային Կենտրոնական բանկերի հետ: Ուժեղ անկախություն և հաղորդակցության հստակ ուղիներ կանոնավոր հաշվետվությունների և մամուլի ասուլիսների միջոցով:

Ճապոնիա. Ճապոնիայի բանկը միջոցներ է կիրառում գների կայունության և տնտեսական աճի հասնելու համար, ներառյալ ցածր տոկոսադրույքները և քանակական և որակական մեղմացումը: Ճապոնիայի բանկը բացասական տոկոսադրույքներ և ակտիվների մասշտաբային գնում է

¹³ ՀՀ ԿԲ թափանցիկության համապատասխանությունը մրջազգային ստանդարտներին, ՀՀ ԿԲ, Երևան 2012թ. հասանելի է <https://www.cba.am/am/sitepages/mptransparency.aspx>,

¹⁴ Overview of monetary policy and markets (europa.eu), Date of access December 9, 2024.

սահմանել՝ գնանկման դեմ պայքարելու համար: Այն պահպանում է գործառնական անկախությունը քաղաքականության արդյունավետ կառավարման համար¹⁵: Շվեդիա. Երկրի կենտրոնական բանկի քաղաքականությունն ուղղված է 2% գնաճին՝ տնտեսական աճին և զբաղվածությանը աջակցելուն¹⁶: Երկրի կենտրոնական բանկը հրապարակում է կանոնավոր զեկույցներ և անցկացնում մամուլի ասուլիսներ՝ քաղաքական որոշումները պարզաբանելու համար: Վստահությունը պահպանելու համար ապահովում է անկախությունը քաղաքական ազդեցությունից:

Կանադա. Նպատակն է պահպանել գնաճը մոտ 2%-ի սահմաններում՝ օգտագործելով ձկուն փոխարժեքի ռեժիմ մեղմելու համար արտաքին ցնցումները: Հատուկ ուշադրություն է դարձնում զեկույցների, ելույթների և մամուլի ասուլիսների միջոցով հստակ հաղորդակցությանը¹⁷: Ամուր իրավական դաշտը ապահովում է կառավարության անկախությունը:

Ավստրալիա. Ավստրալիայի պահուստային բանկը նպատակադրում է գնաճը 2-3% - ի սահմաններում՝ միաժամանակ աջակցելով տնտեսական աճին և զբաղվածությանը: Պարբերաբար հրապարակում է դրամավարկային քաղաքականության վերաբերյալ հայտարարություններ և անցկացնում մամուլի ասուլիսներ: Գործում է ինքնուրույն՝ քաղաքականության արդյունավետությունը բարձրացնելու համար¹⁸:

Նոր Զելանդիա. Երկրի պահուստային բանկը աշխարհում առաջին է կիրառել է գնաճային նպատակադրում՝ թիրախավորելով 1-3% գնաճ՝ հաշվի առնելով զբաղվածության ոլորտի նպատակները¹⁹: Այն իրականացնում է հաշվետվությունների և հրապարակային հայտարարությունների միջոցով հստակ հաղորդակցություն և ունի գործառնական անկախության բարձր աստիճան:

Շվեյցարիա. Շվեյցարիայի ազգային բանկը (ՇԱԲ) կենտրոնանում է գների կայունության վրա՝ միաժամանակ աջակցելով տնտեսական գործունեությանը: Օգտագործում է տոկոսադրույքները և արտաթույթի շուկայի միջամտությունները: ՇԱԲ-ը կանոնավոր տրամադրում է թարմացումներ և մանրամասն

¹⁵ [Outline of Monetary Policy : 日本銀行 Bank of Japan \(boj.or.jp\) Outline of Monetary Policy : 日本銀行 Bank of Japan \(boj.or.jp\)](#) Date of access December 9, 2024.

¹⁶ Շվեդիայի կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականություն, [Monetary policy | Sveriges Riksbank](#) Date of access December 9, 2024.

¹⁷ Կանադայի կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականություն [Monetary policy - Bank of Canada](#) Date of access December 9, 2024.

¹⁸ Ավստրալիայի կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականություն [Monetary Policy | RBA](#) Date of access December 9, 2024.

¹⁹ Նոր Զելանդիայի կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականություն [Monetary Policy Framework - Reserve Bank of New Zealand - Te Pūtea Matua \(rbnz.govt.nz\)](#) Date of access December 9, 2024.

գեկույցներ քաղաքական որոշումների վերաբերյալ: Պահպանում է անկախությունը քաղաքական ազդեցությունից²⁰:

Նորվեգիա. Նորվեգական բանկ նպատակադրում է գնաճը 2%-ի սահմաններում և պահպանում է զբաղվածության բարձր մակարդակը: Հատուկ ուշադրություն է դարձվում դրամավարկային քաղաքականության ոլորտում որոշումների մասին հստակ և հաճախակի իրազեկմանը: Ապահովում է գործառնական անկախություն՝ արդյունավետությունը պահպանելու համար²¹:

Այս երկրները դրամավարկային քաղաքականության ոլորտում լավագույն փորձի օրինակ են շնորհիվ հստակ նպատակների, կենտրոնական բանկերի ուժեղ անկախության, թափանցիկության և քաղաքականության գործիքների արդյունավետ օգտագործման: Նրանց հաջողությունը հաճախ օրինակ է ծառայում այլ երկրների համար, ովքեր ձգտում են հասնել տնտեսական կայունության և աճի: Համաշխարհային տարբեր օրինակներից Նոր Զելանդիայի դրամավարկային քաղաքականության փորձն ամենացանկալին է Հայաստանի համար՝ կապված գնաճի նպատակադրման հաջող ներդրման և Կենտրոնական բանկի անկախության հետ, որոնք զգալիորեն բարձրացրել են նրա տնտեսական կայունությունն ու քաղաքականության արդյունավետությունը: Նոր Զելանդիան առաջին երկիրն էր, որը պաշտոնապես ընդունեց գնաճի թիրախավորման համակարգը 1990 թվականին²²: Այս մոտեցումն ապահովում է գնաճի հստակ, չափելի ցուցանիշներ՝ բարձրացնելով թափանցիկությունն ու հաշվետվողականությունը: Այն նախագծված է ճկուն լինելու համար՝ թույլ տալով Կենտրոնական բանկին արձագանքել կարճաժամկետ տնտեսական ցնցումներին՝ միաժամանակ պահպանելով գների կայունության երկարաժամկետ կողմնորոշումը: Նոր Զելանդիայի պահուստային բանկը (ՆԶՊԲ) գործում է անկախության բարձր աստիճանով, առանց քաղաքական միջամտության: Սա ամրագրված է Նոր Զելանդիայի պահուստային բանկի մասին օրենքում և այն գործում է օրենքին համահունչ, սահմանված նպատակներին համապատասխան՝ պահպանելով գործառնական ինքնավարությունը: ՆԶՊԲ-ի անկախությունը զուգորդվում է հաշվետվողականության արդյունավետ մեխանիզմների հետ, ներառյալ խորհրդարանի և հանրության առջև պարբերաբար հաշվետվողականությունը, ինչը նպաստում է հեղինակության և վստահության ամրապնդմանը: ՆԶՊԲ-ը մեծ ուշադրություն է դարձնում իր քաղաքական որոշումների և դրանց հիմնավորման վերաբերյալ հստակ և թափանցիկ իրազեկմանը:

²⁰ Շվեյցարիայի կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականություն [Publication set Important monetary policy data | SNB data portal](#), Date of access December 9, 2024.

²¹ Նորվեգիայի դրամավարկային քաղաքականություն [Monetary policy](#), Date of access December 9, 2024.

²² Reserve Bank of New Zealand, (1989), Reserve Bank of New Zealand Act 1989, [Reserve Bank of New Zealand Act 1989 No 157 \(as at 28 October 2021\)](#), Public Act – New Zealand Legislation

Հայաստանը կարող է օգուտ քաղել Կենտրոնական բանկի (ԿԲ) ավելի մեծ անկախության ապահովմանն ուղղված իրավական բարեփոխումների իրականացումից՝ Նոր Զելանդիայի օրենսդրական դաշտի նմանությամբ:

Գնաճի նպատակադրման պաշտոնական ռեժիմի ներդրումը հստակ սահմանված նպատակներով և տնտեսական պայմաններին արձագանքելու ճկունությամբ կարող է օգնել կայունացնել գնաճը և ամրապնդել սպասումները Հայաստանում: Կենտրոնական բանկի գործունեության թափանցիկության բարձրացումը քաղաքական որոշումների և տնտեսական հեռանկարների վերաբերյալ կանոնավոր և հստակ իրազեկման միջոցով կարող է ամրապնդել հասարակության վստահությունը և բարձրացնել դրամավարկային քաղաքականության արդյունավետությունը:

Գնաճի նպատակադրման քաղաքականություն իրականացնելիս երկրների մի մասը սահմանում է կանխատեսված գնաճի միջակայք մյուս մասը կոնկրետ մեծություն: Բնականաբար յուրաքանչյուր երկրի համար շատ ավելի հեշտ կլինե՞ր սահմանել միջակայք, ինչը հնարավորություն կտար առավել ճկուն արձագանքելու փոփոխություններին, սակայն միջակայքից շեղվելու դեպքում Կենտրոնական բանկի նկատմամբ վստահության կորուստն ավելի մեծ կլինի, քան կոնկրետ ցուցանիշից շեղվելու դեպքում: Եվ քանի որ անցումային տնտեսությամբ երկրներում կարևորագույն նշանակություն ունեն սպասումների նվազեցումը և վստահության ձեռքբերումը, ապա նպատակահարմար է սահմանել կոնկրետ ցուցանիշ և ոչ թե միջակայք և դրանից շեղվելու դեպքում բացատրել պատճառները, որն ավելի կբարձրացնի վստահությունը Կենտրոնական բանկի նկատմամբ: Ընդհանուր ցուցանիշից շեղվելու պատճառներ կարող են հանդիսանալ ինչպես արտաքին, այնպես էլ ներքին ցնցումներով պայմանավորված շոկային տատանումները, բնական աղետները և այլ արտակարգ իրավիճակները:

ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի մասին օրենքի 4-րդ հոդվածի համաձայն ՀՀ-ում թիրախային է հայտարարված $4\% \pm 1.5\%$ գնաճի ²³ նպատակային միջակայքը՝ մեկ տարվա հորիզոնով, ինչը նշանակում է, որ յուրաքանչյուր եռամսյակ կանխատեսվում է առաջիկա 12 ամիսների գնաճը: Միաժամանակ, նախատեսվում է պահպանել վերջին տարիներին արձանագրված ցածր գնաճի ցուցանիշները՝ միջին ժամկետում: Համեմատության համար ներկայացնենք աշխարհի մի շարք պետությունների կենտրոնական բանկերի գնաճի թիրախային ցուցանիշները՝ 2021-2022 թթ.:

Զարգացող շուկաների որոշ կենտրոնական բանկեր, որոնք գլխավորել են խստացման ցիկլը, արդեն սկսել են իջեցնել տոկոսադրույքները: Չնայած գնաճը արագորեն նվազում է և կանխատեսվում է, որ կվերադառնա իր նպատակային ցուցանիշներին, այն դեռ որոշակի ճանապարհ ունի անցնելու շատ երկրներում: Իհարկե, հետհամաճարակային գնաճի պատմությունը դեռ

²³ ՀՀ օրենքը 2024 թվականի պետական բյուջեի մասին առ. 07.12.2023թ., ՀՕ-386-Ն, Հոդված 4 [1.Orenq_2024text.docx \(live.com\)](#).

չի ավարտվել: Չնայած գնաճը արագորեն նվազում է և կանխատեսվում է, որ կվերադառնա իր նպատակային ցուցանիշներին, այն դեռ որոշակի ճանապարհ ունի անցնելու շատ երկրներում: Դրամավարկային քաղաքականության կտրուկ խստացման որոշակի ազդեցությունը իրական տնտեսության վրա դեռ առջևում է, և այն կարող է այլ կերպ դրսևորվել, քան պատմական նախադեպերում:

Աղյուսակ 1.

Գնաճի թիրախները մի շարք պետություններում 2021-2022թթ.²⁴

Երկիր COUNTRY	Կենտրոնական բանկ CENTRAL BANK	2022	2021
ARGENTINA	Central Bank Rep. Argentina	0% mon. base	0% mon. base
ARMENIA	Central Bank of Armenia	4.00% +/-1.5%	4.00% +/-1.5%
AZERBAIJAN	C.B. of Rep. of Azerbaijan	4.00% +/-2.0%	4.00% +/-2.0%
BANGLADESH	Bangladesh Bank	5.30%	5.40%
BELARUS	N.B. of Rep. of Belarus	5.00%	5.00%
CANADA	Bank of Canada	2.00% +/-1.0%	2.00% +/-1.0%
CHINA	People's Bank of China	around 3.00%	around 3.00%
DEM. REP. CONGO	Central Bank of Congo	7.00%	7.00%
EGYPT	Central Bank of Egypt	7.00% +/-2%	7.00% +/-2%
ESWATINI	Central Bank of Eswatini	3.00% - 7.00%	3.00% - 7.00%
EURO AREA	European Central Bank	2.00%	2.00%
GEORGIA	National Bank of Georgia	3.00%	3.00%
GHANA	Bank of Ghana	8.00% +/-2.0%	8.00% +/-2.0%
INDIA	Reserve Bank of India	4.00% +/-2.0%	4.00% +/-2.0%
INDONESIA	Bank Indonesia	3.00% +/-1.0%	3.00% +/-1.0%
ISRAEL	Bank of Israel	1.00% - 3.00%	1.00% - 3.00%
JAPAN	Bank of Japan	2.00%	2.00%
KYRGYZSTAN	N.B. of Kyrgyz Republic	5.00%-7.00%	5.00%-7.00%
LIBERIA	Central Bank of Liberia	8.50%/+-2%	8.50%/+-2%
MOLDOVA	National Bank of Moldova	5.00% +/-1.5%	5.00% +/-1.5%
MONGOLIA	Bank of Mongolia	6.00% +/-2%	6.00% +/-2%
MOZAMBIQUE	Bank of Mozambique	5.60%	5.60%
NEPAL	Nepal Rastra Bank	6.00%	6.00%
NEW ZEALAND	Res. Bank of New Zealand	2.00% +/-1.0%	2.00% +/-1.0%
NIGERIA	Central Bank of Nigeria	6.00% - 9.00%	6.00% - 9.00%
PAKISTAN	State Bank of Pakistan	6.00%	6.00%
RUSSIA	Bank of Russia	4.00%	4.00%
SWEDEN	The Riksbank	2.00%	2.00%
SWITZERLAND	Swiss National Bank	<2.00%	<2.00%
TAJIKISTAN	N. B. of Tajikistan	6.0% +/-2.0%	6.0% +/-2.0%
TURKEY	C.B. of Rep. of Turkey	5.00% +/-2%	5.00% +/-2%
UGANDA	Bank of Uganda	5.00% +/-2.0%	5.00% +/-2.0%
UKRAINE	National Bank of Ukraine	5.00 +/- 1%	5.00 +/- 1%
UNITED KINGDOM	Bank of England	2.00%	2.00%
USA	Federal Reserve	2.00%	2.00%
UZBEKISTAN 15)	C. B. of Rep. Of Uzbekistan	5.00%	5.00%


Թեև Կենտրոնական բանկի արձագանքը բարձր գնաճի

²⁴ Գնաճի թիրախները 2021-2022 թթ.

<https://www.centralbanknews.info/p/inflation-targets.html>

հետհամաճարակային ժամանակաշրջանին, ըստ երևույթին, հաջող է եղել բազմաթիվ ստանդարտ տնտեսական ցուցանիշներով, 2021-2023 թվականներին դրամավարկային քաղաքականության ազդեցիվ խստացումը նոր մարտահրավերներ և ռիսկեր է առաջացրել:

Ավելի բարձր տոկոսադրույքները ֆինանսական սթրես են առաջացրել տնային տնտեսությունների, ձեռնարկությունների և ֆինանսական հաստատությունների համար՝ աճում է սնանկությունների թիվը և շատ երկրներում բնակարանային գործարքները հիմնականում սառեցված են: Շատ երկրների ֆինանսական վիճակը վատթարացել է և կարող է պահանջել էական ճշգրտումներ:



Գծապատկեր 1: Գնաճը ՀՀ-ում. (2021-2023թ., %) ²⁵

Ներկայացված տվյալներից պարզ է դառնում, 2021 և 2022 թվականներին գնաճի մակարդակը ՀՀ-ում զարգացել է տատանումներով: Այս ընթացքում առավելագույնը 10,3 % մակարդակը գրանցվել է 2022 թ-ի հունիս ամսին, իսկ նվազագույնը 2021 թվականի հունվարին (4,5%): 2023 թվականին նախորդ տարիների համեմատ արձանագրվել է ցուցանիշների անկում: Գնաճի մակարդակը բարձր է եղել հունվար փետրվար ամիսներին, իսկ դեկտեմբերին արձանագրվել է գնանկման ամենաբարձր ցուցանիշը (-0.6%): Հայաստանում 2024թ. սկզբից գների միջին մակարդակը ցածր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, սակայն մայիս ամսից սկսած նկատվում է գնաճ (0.3%) և այդ տեղեկացրը պահպանվում է մինչև 2024 թվականի օգոստոս (1.3%): Հաշվի առնելով, որ Կենտրոնական բանկը պետք է շարունակաբար մոնիտորինգի ենթարկի տնտեսական ցուցանիշները և վերլուծի տվյալները՝ գնահատելու իր գործողությունների արդյունավետությունը և անհրաժեշտության դեպքում քաղաքականության անհրաժեշտ ճշգրտումներ կատարի, որպես նորույթ առաջարկվում է ներառել տնտեսական տվյալների կանխատեսման և վերլուծության նոր մեթոդների և տեխնոլոգիաների մշակում և ներդրում, օգտագործելով դրամավարկային քաղաքականության օպտիմալացման և

²⁵ ՀՀ ԿԲ-ի սպառողական գների ինդեքսը (ամսական) առցանց տվյալների բազա, հասանելի է [Էլեկտրոնային հատվածի վիճակագրություն \(cba.am\)](http://cba.am)

իրական ժամանակում որոշումներ կայացնելու համար մեքենայական ուսուցման ալգորիթմներ: Նման նորամուծությունները կարող են զգալիորեն բարելավել դրամավարկային քաղաքականության արդյունավետությունը և նպաստել մակրոտնտեսական ցուցանիշների ավելի ճշգրիտ կանխատեսմանը, ինչը, ի վերջո, տնտեսությունը կդարձնի ավելի դիմացկուն արտաքին ցնցումներին և փոփոխություններին: Տնտեսական տվյալների կանխատեսման և վերլուծության նոր մեթոդների և տեխնոլոգիաների մշակումն ու ներդրումը կենտրոնական բանկերին հնարավորություն կտան ավելի ճշգրիտ գնահատել տնտեսական զարգացումները և կանխատեսել ռիսկերը: Մեքենայական ուսուցումը, Big Data-ի կիրառումը, գենետիկ ալգորիթմները և ներդրումային ցանցերը կարող են ապահովել քաղաքականության ճկունություն և օպտիմալացում՝ հնարավորություն տալով արագ և հիմնավոր որոշումներ կայացնել ֆինանսական կայունության պահպանման և տնտեսական աճի խթանման ուղղությամբ:

Գիտական նորույթ: Ուսումնասիրելով ՀՀ-ում տնտեսական կայունության վրա դրամավարկային քաղաքականության ազդեցությունը, ինչպես նաև միջազգային փորձը, առաջարկվել է նոր մեթոդների և տեխնոլոգիաների ներդրում, որոնք կնպաստեն ֆինանսական կայունությանն ու տնտեսական աճի խթանմանը:

Եզրակացություն: Դրամավարկային քաղաքականությունը առանցքային դեր է խաղում երկրի տնտեսական կայունության ապահովման գործում: Փողի զանգվածի, տոկոսադրույքների և դրամավարկային քաղաքականության այլ մեխանիզմների արդյունավետ կառավարումը կարող է ազդել գնաճի մակարդակի, ներդրումային ակտիվության, գործազրկության և տնտեսական զարգացման ընդհանուր մակարդակի վրա: Ընդհանուր առմամբ, ճիշտ մշակված և իրականացվող դրամավարկային քաղաքականությունը նպաստում է կայուն տնտեսական աճին, հեշտացնում է արտաքին պարտքերի կառավարումը և նպաստում երկրի ֆինանսական կայունության ամրապնդմանը: Արդյունավետ դրամավարկային քաղաքականության իրականացումը պահանջում է հավասարակշռված մոտեցում, որը հաշվի կառնի ինչպես մակրոտնտեսական գործոնները, այնպես էլ կոնկրետ տնտեսական միջավայրի առանձնահատկությունները:

Դրամավարկային քաղաքականության արդյունավետությունը զգալիորեն տարբերվում է տարբեր երկրներում՝ տնտեսական կառույցների, ինստիտուցիոնալ հիմքերի և արտաքին պայմանների տարբերությունների պատճառով: Լավ զարգացած ֆինանսական համակարգեր, ուժեղ ինստիտուցիոնալ կառավարում և արդյունավետ կենտրոնական բանկեր ունեցող երկրները հակված են ավելի հաջող արդյունքների հասնել իրենց դրամավարկային քաղաքականության մեջ և ընդհակառակը, ավելի թույլ հաստատություններ և ավելի քիչ զարգացած ֆինանսական շուկաներ ունեցող երկրները հաճախ բախվում են այնպիսի խնդիրների, ինչպիսիք են բարձր գնաճը, անկայուն փոխարժեքները և քաղաքականության փոխանցման սահմանափակ մեխանիզմները: Հայաստանի համար այս տարբերությունների ըմբռնումը

հնարավորություն է տալիս բացահայտել և ներդնել լավագույն փորձը՝ հարմարեցված իր յուրահատուկ տնտեսական պայմաններին:

Դրամավարկային քաղաքականությունը առանցքային դեր է խաղում մակրոտնտեսական կայունության և կայուն տնտեսական աճի ապահովման գործում՝ այն դարձնելով կառավարման կարևոր գործիք կենտրոնական բանկերի և պետական իշխանությունների համար: Արդյունավետ դրամավարկային քաղաքականության իրականացումը պահանջում է ինտեգրված մոտեցում և տարբեր գործոնների դիտարկում: Մեր կողմից առաջարկում և կարևորում ենք.

- Կենտրոնական բանկն ունենա և ներդնի ավելի կոնկրետ և չափելի նպատակներ՝ ուղղված գնաճի վերահսկման, տնտեսական աճի պահպանման, ֆինանսական կայունության ապահովման և գործազրկության նվազեցմանը, որպեսզի քաղաքականությունն ավելի հեշտ հարմարեցվի ներկայիս տնտեսական իրավիճակին:

- Հասարակության և տնտեսավարողների շրջանում տնտեսական գրագիտության մակարդակի բարձրացումը, ինչպես նաև դրամավարկային քաղաքականության հետևանքների կանխատեսման և գնահատման վերլուծական գործիքների մշակումն ու կիրառումը, ինչը կնպաստի դրա արդյունավետության բարձրացմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ օրենքը 2024 թվականի պետական բյուջեի մասին, առ. 07.12.2023թ., ՀՕ-386-Ն,
2. ՀՀ օրենքը ՀՀ կենտրոնական բանկի մասին, առ. 30.06.1996թ., ՀՕ-69,
3. Андрушин, С., Кузнецова, В., “Приоритеты денежно-кредитной политики центральных банков в новых условиях.” Вопросы экономики, М. 2011; (6), с. 57-71
4. Моисеев, С., Денежно кредитная политика: теория и практика, 2011, 784 с.
5. Bernanke Ben S., “The New Tools of Monetay Policy”, Washington DC, 2020, 57p.
6. Blanchard, O., “Macroeconomics”, The 8th edition, London, UK: Pearson, 2021, 577p.
7. Lasak, P., Wiliams, J., “Digital Tranformation and The Economics of Banking”, NY 1st edition, 2024, 217p.
8. Mishkin, F., “The Economics of Money, Banking and Finacial Markets”, The 12th edition, Columbia University, 2019. 746p.,
9. ՀՀ կենտրոնական բանկ, <https://www.cba.am/>
10. Central Bank News, <https://www.centralbanknews.info/>
11. European Central Bank, [European Central Bank \(europa.eu\)](https://www.ecb.europa.eu/)
12. European Central Bank, “29 June, 2021”. [Financing a green and digital recovery](https://www.ecb.europa.eu/press/eng/2021/06/29/21062901.en.htm),
13. Bank of Japan, <https://www.boj.or.jp/>
14. Sveriges Riksbank, [Startsida | Sveriges Riksbank](https://www.sverigesriksbank.se/)
15. Bank of Canada, <https://www.bankofcanada.ca/>
16. Reserve Bank of Australia, <https://www.rba.gov.au/>
17. Reserve Bank of New Zealand, <https://www.rbnz.govt.nz/>

18. Swiss National Bank <https://www.snb.ch/en/>

19. Norges Bank <http://www.norges-bank.no>

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

ԷԼԻՆԱ ՇԱՄԽԱԼՈՎԱ

Համառոտագիր

Յուրաքանչյուր տնտեսության կայուն զարգացման կարևոր պայմաններից մեկը հանդիսանում է դրամավարկային քաղաքականության հստակ մեխանիզմի ներդրումը, որը կենտրոնական բանկին հնարավորություն է ընձեռնում ներազդել գործարար ակտիվության վրա, իրականացնել առևտրային բանկերի գործունեության վերահսկումը և ապահովել կայուն դրամաշրջանառություն: Անհրաժեշտ է նշել, որ դրամավարկային քաղաքականության իրականացման միջոցով տնտեսությունը դուրս է բերվում ճգնաժամային իրավիճակներից, սակայն քաղաքականության սխալ վարման արդյունքում կարող է տեղի ունենա հակառակ գործընթացը: Այս համատեքստում դրամավարկային քաղաքականությունը իրենից ներկայացնում է նաև տնտեսության անուղղակի կարգավորման այսպես կոչված «վտանգավոր» լծակ:

Դրամավարկային քաղաքականությունը շարունակում է մնալ ժամանակակից աշխարհում տնտեսական կայունության ապահովման կարևոր գործիք, որը պահանջում է հարմարվողականություն և նորարարություն՝ նոր մարտահրավերներին և տնտեսական միջավայրի փոփոխություններին արդյունավետ արձագանքելու համար: Այս ամենն էլ **արդիական են դարձնում հետազոտության** թեման:

Հոդվածի **նպատակն** է ուսումնասիրել դրամավարկային քաղաքականության ազդեցությունը երկրի տնտեսական կայունության վրա: Նպատակն իրականացնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

➤ ուսումնասիրել և վերլուծել դրամավարկային քաղաքականության գործիքները և իրականացման եղանակները,

➤ վերլուծել ՀՀ ԿԲ-ի կողմից իրականացվող դրամավարկային քաղաքականությունը,

➤ բացահայտել դրամավարկային քաղաքականության միջազգային լավագույն փորձը:

Մեթոդաբանությունը: Հոդվածի համար տեսական և մեթոդական հիմք են հադիսացել արտասահմանյան և հայ գիտնականների, հետազոտողների աշխատությունները, Համաշխարհային բանկի, Արժույթի միջազգային հիմնադրամի, տարբեր երկրների կենտրոնական բանկերի կողմից հրապարակված զեկույցներն ու պաշտոնական վիճակագրությունը և այլ զեկույցներ:

Գիտական նորույթը: Ուսումնասիրելով ՀՀ-ում տնտեսական կայունության վրա դրամավարկային քաղաքականության ազդեցությունը, ինչպես նաև միջազգային փորձը, առաջարկվել է նոր մեթոդների և տեխնոլոգիաների ներդրում, որոնք կնպաստեն ֆինանսական կայունությանն ու տնտեսական աճի խթանմանը:

Բանալի բառեր: Դրամավարկային քաղաքականություն, Կենտրոնական բանկ, գնաճ, տնտեսական կայունություն, տոկոսադրույքներ, ֆինանսական քաղաքականություն:

ВЛИЯНИЕ ДЕНЕЖНО-КРЕДИТНОЙ ПОЛИТИКИ НА ЭКОНОМИЧЕСКУЮ СТАБИЛЬНОСТЬ

ЭЛИНА ШАМХАЛОВА

Аннотация

Одним из важных условий устойчивого развития каждой экономики является внедрение четкого механизма денежно-кредитной политики, который позволяет Центральному банку влиять на деловую активность, осуществлять надзор за деятельностью коммерческих банков и обеспечивать стабильное денежное обращение. Необходимо отметить, что посредством реализации денежно-кредитной политики экономика выводится из кризисных ситуаций, но в результате неправильного проведения политики может произойти обратный процесс. В этом контексте денежно-кредитная политика также представляет собой так называемый "опасный" рычаг косвенного регулирования экономики. Денежно-кредитная политика остается важным инструментом обеспечения экономической стабильности в современном мире, требующим адаптации и инноваций для эффективного реагирования на новые вызовы и изменения экономической среды. Этот контекст делает тему исследования актуальной.

Целью статьи является изучение влияния денежно-кредитной политики на экономическую стабильность страны. Для реализации цели были поставлены следующие задачи:

- Изучить и проанализировать инструменты и методы проведения денежно-кредитной политики,
- Проанализировать проводимую Центральным банком РА денежно-кредитную политику,
- Выявить лучшие международные практики в сфере денежно-кредитной политики.

Методология. Теоретической и методологической основой для статьи послужили работы зарубежных и армянских ученых, исследователей, отчеты и официальная статистика, опубликованные Всемирным банком, Международным валютным фондом, центральными банками разных стран и другие отчеты.

Научная новизна. Исследуя влияние денежно-кредитной политики на экономическую стабильность в Республике Армения, а также международный опыт, предложено внедрение новых методов и технологий, которые будут способствовать финансовой стабильности и стимулированию экономического роста.

Ключевые слова. Денежно-кредитная политика, Центральный банк, инфляция, экономическая стабильность, процентные ставки, финансовая политика.

THE IMPACT OF MONETARY POLICY ON ECONOMIC STABILITY

ELINA SHAMKHALOVA

Abstract

One of the prerequisites of the sustainable development of each economy is the introduction of a clear monetary policy mechanism that allows the Central Bank to influence business activity, supervise the activities of commercial banks, and ensure stable monetary circulation. It should be noted that through the implementation of monetary policy, the economy is brought out of crises. Still, due to improper policy implementation, the reverse process can occur. In this context, monetary policy also represents a so-called "dangerous" lever of indirect regulation of the economy. Monetary policy remains an important tool for ensuring economic stability in the modern world, requiring adaptation and innovation to effectively respond to new challenges and changes in the economic environment. This context makes the research topic relevant. **The purpose of the article** is to study the impact of monetary policy on the economic stability of the country. The following tasks were set in the scope of the article:

- to study and analyze the tools and methods of monetary policy implementation,
- to analyze the monetary policy implemented by the Central Bank of Armenia,
- to identify the best international practices.

Methodology. The theoretical and methodological basis of the study were the works of foreign and Armenian researchers, as well as the reports and official statistics published by the World Bank, the International Monetary Fund, and central banks of different countries.

Scientific novelty. By studying the impact of monetary policy on economic stability in Armenia, as well as international experience, the introduction of new methods and technologies was proposed. The proposed measure will contribute to financial stability and stimulate economic growth.

Keywords. Monetary policy, Central Bank, inflation, economic stability, interest rates, financial policy.